



# Այունյաց երկիր

Գինը 100 դրամ:

Հիմնադրվել է 1991 թ. 12 րոպեի 20/32: Հեռուստա-  
հաղորդումները 20/32: Հեռուստա-  
5 25 63 (091) 45 90 47 (077) 06 28 02

www.syuniacyerkir.am

**Օ, վաշխառու ճորտեր՝ դ,  
հացկատարներ՝ դ, միջին  
Սերմանողներ քամու ու  
մուրացկանության, -  
Մեզ ժառանգած  
գանձի, օ, վարսիչներ  
հեղին...**  
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



## Մեղրիում սպասում են գազիֆիկացման

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Իրան-Հայաստան գազատարի կառուցումից 15 փարի անց Իրանին սահմանակից Մեղրու բնակիչներին ամենաշատը մտահոգող խնդիրը գազիֆիկացման վերաբերյալ չիրականացած պաշտոնական խոստումներն են:

«2011 թվին մեզ խաբել են, մինչև է հի մա էր գազը չկա, թանկ-կրակ բերում են բալոններով, դրանցից ենք վերցնում», - ասում է մի գայրացած մեղրեցի:

«Հայրենուզագարդ»-ի սեփականատեր ռուսական ընկերությանը ծեռնուռ չէ Հայաստանի հարավային դարպասի գազիֆիկացումը:

«Մենք ավարտել ենք մեր հիմնական ծրագիրը, եւ կան մի շարք համայնքներ, որտեղ մեղրումների տնտեսական արդյունավետությունը չի արդարացվում», - ասաց ընկերության մամուլի խոսնակ Շուշան Սարգսյանը:

Հայաստանի կառավարությունը նախատեսում է Իրանից, թե՛ Ռուսաստանից Հայաստան հասնող խողովակաշարից գազ տրամադրել Մեղրու տարածաշրջանին: Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Արշակ Ուստաբաշյանը չգիտի դա:

Սյունիքի մարզպետարանից հայտնում են, որ 2014-ից պետք է սկսվի խողովակաշարի շինարարությունը: Մեղրում գազով ապահովելու նախագծերն ու նախահաշվարկները շարունակվում են արդեն երեք տարի: Դեռ չեն հաստատվել: Այս ամորշությունների ֆոնին մեղրեցիները տարիներով չլուծվող խնդիրների վերաբերյալ գնահատական են հնչեցնում. «Մեղրին արհամարհված շրջան է, ոչ մեկն ուշադրություն չի դարձնում»:

Մեղրու բնակիչները բազմաթիվ այլ խնդիրների մասին են բարձրաձայնում, տարիներ շարունակ նորմալ հիվանդանոց չկա, դժգոհում են նաև սոցիալական պայմաններից, աշխատատեղերի բացակայությունից, ասում են՝ մի կերպ յուրա են գնում: Բնակիչները դժգոհում են նաև հանքային արդյունաբերության հետեւանքներից: «Ազատության» գրուցակիցներից մեկն էլ ասաց, որ տարիներով չլուծվող խնդիրների հետեւանքով մարդիկ հեռանում են հարազատ բնակավայրից:

azatutyun.am  
05.12.2013

## ՄԻՔԱՅԵԼ ՕՐԱՆՅԱՆ. «Բոլորս պիտի հասկանանք. Մեղրին թուլացնելով՝ վրանգվում է մեր երկրի ներկան ու ապագան»

Մեղրու տարածաշրջանում ստեղծված բնապահպանական խնդիրների, դրանց լուծման համար արվելիք աշխատանքների մասին է զրույցը Մեղրու ավագանու բնապահպանական հանձնաժողովի այլեւս նախկին նախագահ Միքայել Օհանյանի հետ:

### ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

— Պարոն Օհանյան, շուրջ երկու տարի է, մեր ուսումնասիրություններն են ցույց տալիս, որ բավականին լուրջ, կարելի է ասել՝ ճակատագրական հարցեր են քննարկվում Մեղրիում, որոնք,

եթե չափազանցություն չլինի, կապված են Մեղրու լինել-չլինելու հետ, եւ այդ հարցերն այսօր փորձում ենք պարզաբանել Ձեր միջոցով, հաշվի առնելով, որ դեկավարել եք Մեղրու ավագանու բնապահպանական հանձնաժողովը եւ ունեք յուրահատուկ դիրքորոշում Մեղրում սպառնա-

ցող մարտահրավերների դիմակայման հարցում: — Դուք իրավացի եք: Մեղրիում տիրող բնապահպանական վիճակն ավելի քան անհանգստացնող է, եւ այս խնդիրն այնքան էլ նոր չէ: Սկզբում թվում էր, թե սա ինչ-որ մեկի անբարո, Շարունակությունը՝ էջ 4

## «Որոտանի հեկերի համալիրի» շուրջ՝ փարփոնակ զարգացումներ

### ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Ինչպե՞ս կզարգանան հայ-ամերիկյան փոխհարաբերությունները

Երբ նոյեմբերի 23-ին հայտնի դարձավ, որ ամերիկյան Contour Global ընկերությունը պատրաստվում է 180 մլն դոլարով ձեռք բերել «Որոտանի հեկերի համալիրը», իշխանությունները դա ներկայացրին ՀՀ էներգետիկ համակարգի դիվերսիֆիկացմանն ուղղված քայլ՝ ցույց տալով, թե ամեն ինչ չէ, որ տալու են ռուսներին: Ու թեև ՀՀ էներգետիկայի փոխնախարար Ա. Գալստյանը հայտարարեց, թե առջուվաճառքի պայմանագիրը պատրաստ է ստորագրման, «Ժողովուրդ»-ի աղբյուրները, սակայն, հակառակն են պնդում: Կառավարության նոյեմբերի 21-ի նիստում հարցի փակ քննարկման արդյունքում ձեռք բերված համաձայնությունը մի քանի օր

առաջ անսպասելիորեն վերանայվել է, եւ գործարքի ճակատագիրը վտանգված է: Մեր տեղեկություններով՝ հայկական կողմը վերջին պահին ամերիկյան ընկերությանն առաջադրել է երկարաժամկետ ներդրումների նոր պայմաններ: Թե ինչու է գործարքը նախապես համաձայնեցված պայմանագիրը հենց Վ. Պուտինի այցի օրերին վերանայել, դժվար չէ կռահել: Նկատենք, որ այս գործարքի վիճեցումը կարող է բացասական անդրադառնալ ԱՄՆ-ի հետ համատեղ մյուս ծրագրերի վրա:

armur.am, 4 դեկտեմբերի 2013թ.

Հայաստանի էներգետիկայի նախարարությունը չի հաստատում «Որոտանի հեկերի համալիրը» ԱՄՆ-ին վաճառելու մասին լուրը

Շարունակությունը՝ էջ 2



«Որոտանի հեկերի համալիր» ՓԲԸ-ի հիդրոէլեկտրակայան եզակի կառույցներից մեկը՝ Շամբի ջրամբարի հորանային ջրանցքը (մարզադրամադրիկ)

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ** Մինչև հունվարի 15-ը կշարունակվի Սյունիքի մարզային միակ պարբերականի՝ «Այունյաց երկիր» թերթի 2014թ. բաժանորդագրությունը: Թերթի տարեկան բաժնեգրի վեց հազար դրամ է, ինչպես նախորդ տարիներին: Բաժանորդագրվել կարելի է թերթի խմբագրություն այցելելով կամ զանգահարելով: Ե՛վ անհատ բաժանորդները, ե՛ւ իրավաբանական անձինք բաժանորդագրման համար կարող են նաև պայմանագիր կնքել խմբագրության հետ: «Այունյաց երկիրը» ընթերցողներին ամբողջ տարվա համար (անսակայն երեք համար պարբերականությամբ) առաջարկում է անաչառ են ամբողջական տեղեկատվություն Սյունիքի մարզի մասին եւ, ինտելե, սեփական կարծիքն արտահայտելու լիակատար ազատություն:

# Որ ձմեռն անակնկալներ չմապուցի

## ՃԱՆԱԳՐՎԱԾԻՆՈՒԹՅՈՒՆ

Անցնող տարում «Ոսմար» ճանապարհաշինական ընկերությունը բարեկարգման ու կառուցապատման նշանակալի աշխատանքներ է իրականացրել Գորիս քաղաքում, ինչը զգալիորեն փոխել է քաղաքի դեմքը: Համայնքի Սաթյան փողոցի մեկ կիլոմետր 350 մետր ճանապարհահատվածը (Նախագծային արժեքը՝ 14.3 մլն) հիմնանորոգվել է այս տարում, իսկ ընդհանրապես ճանապարհի հիմնանորոգումն ավարտին է հասցվել երեք փուլով (Նախագծային արժեքը՝ 90 մլն դրամ):



Արթուր Մարտիրոսյան, «Ոսմար» ՍՊ ընկերության փոխնախագահ

Ինչպես տեղեկացնում է «Ոսմար» ՍՊ ընկերության տնօրեն Արթուր Մարտիրոսյանը, ժամանակին այդ փողոցը կառուցվել է այնպես, որ շենքերն այժմ հնարավորություն չեն տալիս ժամանակակից չափանիշներին համապատասխան ճանապարհ ունենալ, խոսքը վերաբերում է դրա լայնքին, թեքություններին, մայթերին, ավելի ստույգ՝ վերջինիս բացակայությանը: Բայց որտեղ հնարավոր է եղել մայթերի անցանելություն ապահովել, արվել է: Նաեւ որոշակի նորոգվել է նախկինում գործող ջրահեռացման գանցը (Նորը ստեղծելու համար առեւտրի գումար կպահանջվեր): Գորիսեցիների վկայությամբ՝ Սաթյան փողոցի հիմնանորոգումը քաղաքում իրականացված լավագույն գործերից է, քանզի Գորիսին պատվով չէր բերում

մնան անմխիթար ու անբարեկարգ փողոց ունենալը: Երկու փուլով մոտ 100 մլն դրամ նախագծային արժեքով նորոգվել է նաեւ քաղաքի երկու հատվածներն իրար կապող խորեմացու փողոցը՝ քաղաքի բաժնուկ ճանապարհներից մեկը (ժամանակագրության առումով այս մեկն ավելի վաղ է իրականացվել): Այս տարում Գորիսի բարեկարգված հատվածներից է («Ոսմար» ՍՊ

ընկերության միջոցով) Վանքի տափ քաղաքում: Այստեղ երկու փուլով կատարվել են բակերի բարեկարգում, ասֆալտապատում, առաջին փուլի աշխատանքների նախագծային արժեքը կազմել է 32.7 մլն, երկրորդինը՝ 14 մլն դրամ: Իսկ ահա Գորիսի Շահումյան փողոցը, որ կարելի է համարել քաղաքի այցեքարտերից մեկը եւ որով անցնում է Երեւան-Գորիս, Մեղրի-Իրանի

ասիման Մ-2 միջպետական ճանապարհը, հիմնանորոգվել է, կառուցվել են մայթերը: Ավելի ստույգ՝ այս տարում նորոգվել է Մ-2 միջպետական ճանապարհի 4.5կմ հատվածը, որն ընդգրկում է «Ոսմար» ընկերության վարչական շենքից մինչեւ Քարահունջի խաչմերուկը: Ճշմարիտն ասած՝ այդ ծրագիրը մեկնարկել էր 2008 թվականին, բայց դադարեցվել էր 2008 թվականին: **Շարունակությունը՝ էջ 6**

## Լուրեր

«Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունում, 2004թ. մասնավորեցումից հետո առաջին անգամ, տեղի է ունեցել կադրային անսովոր լուծում: Այսուհետ ընկերության անվտանգության, բնապահպանության հարցերը, իսկ ավելի ուշ՝ հանրության հետ կապերը, կտնօրինի գլխավոր բաժնետիրոջ կողմից նշանակված նոր պաշտոնյան՝ արտերկրից գործուղված: Ըստ մասնագետների՝ դա Մաքսիմ Հակոբյանի միտքով է առաջին քայլն է, որին կարող է հաջորդել ընկերության այլազգի ֆինանսական տնօրենի նշանակումը, ինչին տազանապով են սպասում կոմերցիոնալ վերնախավն ու օլիգարխիկ ռեժիմի սպասավորները՝ մարզի ամեն մի պունտում վարձակալված կամ ներդրված:

Նոյեմբերի 30-ին եւ դեկտեմբերի 1-ին ՌԳ տարածաշրջանների պատվիրակությունները հանդիպումներ են ունեցել ՀՀ մարզերում, հայաստանցի գործընկերների հետ քննարկել համագործակցության զարգացման հեռանկարները: Վոլգոգրադի մարզի պատվիրակները Սյունիքում փոխգործակցության խորացման հարցեր են քննարկել մարզի ներկայացուցիչների հետ:

Դեկտեմբերի 9-ին Սյունիքի մարզ էր այցելել ՀՀ գլխավոր դա տախագ Գեորգ Կոստանյանը, ով մարզի դատախազության աշխատակիցներին ներկայացրեց Սյունիքի մարզի նորանշանակ դատախազ Արմեն Աֆանդյանին:

Սյունիքի մարզի ճակատեն համայնքում դեկտեմբերի 8-ին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունում ընտրվել է համայնքի նոր ղեկավար: Երկու թեկնածուից մեկը՝ գործող գյուղապետ, ՀՀԿ անդամ Արծրուն Հարությունյանը հավաքել է 45, իսկ նրա մրցակից, անկուսակցական Անդրյուշա Դավթյանը՝ 52 ձայն: 115 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 100 հոգի կամ ընտրելու իրավունք ունեցողների մոտ 87 տոկոսը:

«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն Արտյոմ Թադևոսյանը դեկտեմբերի 9-ին դիմում է ներկայացրել աշխատանքից ազատվելու մասին: Հրաժարականի շարժառիթների մասին տարբեր վարկածներ են շրջանառվում:

Խմնորեսկի դպրոցի սաները «Հայ ասպետի» եզրափակիչում մրցում էին Նոյեմբերյանի N2 դպրոցի եւ Լոռու մարզի Մեծավան գյուղի դպրոցի սաների հետ: Խիստ լարված եւ հավասար պայքարում երեք թիմն էլ աչքի ընկան փայլուն գիտելիքներով՝ հավաքելով 67-ական միավոր: Խաղի կածանկերպիչները ստիպված էին արժաթ եւ բրոնզե մեդալների փոխարեն բոլորին արժանացնել ոսկե մեդալների եւ գավաթի:

# «Որոտանի հեկերի համալիրի» շուրջ՝ փարորինակ զարգացումներ

## ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Սկզբը՝ էջ 1

Հայաստանը «Որոտանի հեկերի համալիր» պետական ՓԲԸ-ն չի վաճառել ամերիկյան Contour Global ընկերության Contour Global Hidrocaskade դուստր ընկերությանը, չորեքշաբթի խորհրդարանում հարցուպատասխանի ժամանակ ասաց Հայաստանի էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը:

Ավելի վաղ ասվել էր, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿԳ) նոյեմբերի 27-ին հավանություն է տվել «Որոտանի հեկերի համալիր» պետական ՓԲԸ-ն ամերիկյան Contour Global ընկերության Contour Global Hidrocaskade դուստր ընկերությանը վաճառելու գործարքին:

Մովսիսյանի խոսքով՝ այս պահին ամերիկյան ընկերության հետ բանակցությունները դեռ չեն ավարտվել, եւ վաճառքի որեւէ գործարք չի ստորագրվել:

Սեկնաբանելով ընդդիմադիր խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանյանի ենթադրությունն այն մասին, թե Հայաստանը «մտափոխվել է» ԱՄՆ-ին Որոտանի հեկերի համալիրը վաճառելու հարցում, քանի որ մտադիր է այն փոխանցել Ռուսաստանին՝ նախարարն ընդգծեց, որ այդ հարցը երբեք չի քննարկվել ռուսական կողմի հետ:

Նոյեմբերի 23-ին Վաչինգտոնում տեղի ունեցած հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի նիստում ասվել էր, որ ամերիկյան Contour Global ընկերությունը 180 միլիոն դոլար կներդնի Հայաստանի Որոտանի հեկերի համալիրում: Այս ներդրումը Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ երկկողմ հարաբերությունների պատմության խոշորագույն ներդրումն է:

Որոտանի հեկերի համալիրը գտնվում է Հայաստանի հարավում, ունի համակարգաստեղծ նշանակություն երկրի էներգետիկայի համար: Բաղկացած է երեք հիդրոէլեկտրակայանից՝ Սպանդարյանի (դրված

հզորությունը՝ 76 ՄՎտ), Շամբի (171 ՄՎտ) եւ Տաթեի (157,2 ՄՎտ): Contour Global ընկերությունը, որը հիմնվել է մասնավոր ներդրողների կողմից 2005 թվականի սեպտեմբերին Նյու Յորքում, զբաղվում է էներգետիկ ծյուղում զարգացմամբ, արտադրությամբ եւ կառավարմամբ աշխարհի տարբեր երկրներում: ԱՊՀ երկրներից ընկերությանը պատկանում է Ուկրաինայի Կրամատորի ջէկը: **arka.am, 4 դեկտեմբերի 2013թ.**

# «Որոտանի հեկերի համալիրի» շուրջ Ռուսաստանի հետ բանակցություններ չեն վարվում

«Որոտանի հեկերի համալիրի» շուրջ Ռուսաստանի հետ բանակցություններ չեն վարվում: Այդ մասին դեկտեմբերի 4-ին խորհրդարանում

լրագրողներին հայտնել է Հայաստանի էներգետիկայի ու բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը: Նա ընդգծել է, որ համալիրի վաճառքի վերաբերյալ որոշում դեռ չի կայացվել: «Դեռ միայն բանակցություններ են վարում: Երբ դրանք ավարտեն, այն ժամանակ կհայտնենք, ինչի մասին է խոսքը», - հայտարարել է նախարարը:

Ինչպես նախկինում հաղորդում էին, համալիրը կարող է ձեռք բերել ամերիկյան Contour Global ընկերությունն ու ներդնել 180 մլն դոլար: Նախարարի խոսքով՝ լիարժեք արդիականացման համար անհրաժեշտ է նվազագույնը 70 մլն դոլար:


Որոտանի հեկերի համալիրը կառուցվել է 70-80-ական թթ., բաղկացած է 3 էլեկտրակայանից՝ Սպանդարյան (76 ՄՎտ հզորություն), Շամբի (171 ՄՎտ) ու Տաթեի (157,2 ՄՎտ հզորություն): «Որոտանի հեկերի համալիր» ՓԲԸ-ի 100 տոկոսանոց բաժնետերը Հայաստանի կառավարությունն է: 2010 եւ 2011 թվականներին համալիրն արտադրել է մոտ 1,2 մլրդ կվտ/ժ էլեկտրաէներգիա, որը 2011թ. կազմում էր Հայաստանի ընդհանուր արտադրության 16 տոկոսն ու բոլոր հեկերի արտադրածի կեսը:

**banker.am 5 դեկտեմբերի 2013թ.**

# Անդրադարձ Համո Սահյանի բանաստեղծական աշխարհին

## ՄՐՈՒԹՅՈՒՆ


Սիսիանի քաղաքապետարանը եւ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը հայ մեծ բանաստեղծ Համո Սահյանի 100-ամյակի կապակցությամբ հայտարարում են արձակ եւ չափածո խոսքի մրցույթ. շարադրություն,



բանաստեղծություն, խոհ եւ այլն: Մրցույթի թեման արդեն իսկ ազդարարեցինք վերնագրում՝ «Անդրադարձ Համո Սահյանի բանաստեղծական աշխարհին»: Վերնագրի ընտրության հարցում մրցույթի յուրաքանչյուր մասնակից ազատ է: Մրցույթին կարող են մասնակցել մարզի հանրակրթական դպրոցների սովորողները, միջին -մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, ինչպես նաեւ Սյունիքի մարզի մինչեւ 30 տարեկան տղաներն ու աղջիկները: Մրցույթի մասնակիցների խոսքը մինչեւ 2014թ. հունվարի 1-ը պետք է ներկայացնել «Սյունյաց երկիր» խմբագրություն: Դրանք

կքննարկվեն խմբագրության գեղարվեստական խորհրդում եւ Համո Սահյանի 100-ամյակի նախապատրաստական աշխատանքների կազմակերպիչներին (Սիսիանի քաղաքապետարանում ստեղծված), որոնք էլ կորոշեն լավագույն երեք աշխատանքը: Լավագույն գործերի հեղինակները կարժանանան դրամական պարգևի: Մրցանակակիր նյութերը կիրապարակվեն (հեղինակի լուսանկարով) «Սյունյաց երկիր» թերթի՝ Համո Սահյանի 100-ամյակին նվիրված հատուկ համարում: Մրցույթի առնչվող հարցերով կարող եք դիմել թերթի խմբագրություն: **«Սյունյաց երկիր»**

# ԹՉՍձ՝ ԾՕ՝ ԾԾԱ



## ՏՕԵ ԹՉՍձՕՍ ԻՍՉՍԱԵՍ ՉԲԵՉ ԾԾԱԵՍ՝

Վիլյամ Սարոյանը, Հայաստանը, հայ գրականությունն ու երաժշտությունը

Կարծես Վիլյամ Սարոյանը Աստ ծո մատը ճակատին ունեցող բնատուր մեծ տաղանդ էր՝ նման հայ ժողովրդական բափառիկ գուսաններին և բանաստեղծներին, ովքեր ներքին մղումով սքանչելի ասքեր ու վիպերգություններ էին հյուսում, բայց և նա աշխարհի հին ու նոր քաղաքակրթությունները ներծած, հայ ժողովրդի հազարամյա տոկուն արյան հիշողությամբ և զգայնությամբ օժտված անգուժական մտավորական էր: Սասունցի Դավթի պես խաղաղության ու բարության մունետիկ էր՝ իր շխտակ գրավոր ու բանավոր խոսքով վսեմ կանգնած հակամարտ աշխարհի դեմ: Սարոյան մարդու և գրողի գաղտնիքը անսահման սիրո և գութի մեջ է՝ արվեստի լույսի բարձրագույն մակարդակ ապահովող: «Կջանամ մարդը վերադարձնել իր բնական արժանապատվության և ազնվության: Կուզենամ մարդը վերադարձնել ինքն իրեն»:

Համապարփակ, տարրուղակ, անընդգրկելի գրող էր՝ գոհունակ ապրելով պատվով, բավականություն ստանալով մահկանացու լինելուց, չվախենալով ոչ մահից, ոչ անմահությունից: Ստեղծագործել է ճիշտ կես դար, կյանքի օրոք ուներ տպագրված հիսուն հատոր, հիսուն է՝ անտիպ, թարգմանվել է աշխարհի հարյուր և ավելի լեզուներով: «Ես հպարտ եմ, որ գրող եմ: Իմ հերոսը ժողովուրդն է, կուզեի նույնիսկ Աստ-

ծուն դասել մարդկանց մեջ ու նրան ասել՝ բարե՛ւ»: Կյանքն առաքինի ապրելու բարոյախոսության առաքյալն էր: «Իմ ստեղծագործությունը համով արձակ է: Իմ բոլոր գրքերի նյութը միշտ ես եղել: Ես հայ Սարոյանն եմ: Ես ոչ մեկին նման չեմ»: Իր երկերով վերածնված մարդուն պատգամում էր: «Կյանքի ժամերն ապրի՛ր այնպես, որ քեզ բաժին ընկած ժամերին չավելացնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ժպտով ընդունես նրա անսահման լույսն ու խորհուրդը»:

Հիրավի, Սարոյանը օտարագիր՝ անգլիագիր հայ գրող է: Եղեռնի նախօրյակին Սարոյանների ընտանիքը գաղթել է Բիբլիսից և հանգրվանել ԱՄՆ-ում, ուր և 1908-ի օգոստոսի 31-ին ծնվել է ընտանիքի չորրորդ երեխան՝ Վիլյամը: Այդպես էլ Սարոյանը չճանաչեց հայոց այբուբենը, բնագրով չընթերցեց հայ գրականությունը, բայց մայրենի լավագույնս տիրապետողները ծնողներն էին: Արմենակ հայրը գրող դառնալու խենթություն ուներ, Թագուհի մայրը քաջ գիտեր գրաբար և արեւմտահայերեն: Հայկական հարկի տակ Սարոյանը յուրացրեց մեր ժողովրդի ազնվականությունը, քաջությունը, ուշիմությունը, խիզախությունը, պարզությունը, հեզմանքն այս սրամտությունը, ժառանգեց նա բարեմասնությունները և ողջ կյանքում հարազատ մնաց հոգեկան այս օրենքներին: «Հայ ոգին զորա-

վոր ոգի մը է: Ատիկա չի պարտվի չար աշխարհով մը... Հայաստանի լեզուն սքանչելի է»: Ճշմարիտ հայ մարդուն վայել նկարագրով և բարոյական պահվածքով Սարոյանն իր ստեղծագործության հայկական թեմաներով երկերով բարձրածայնեց: «Հայերն անպարագծելի ժողովուրդ են: Հայաստանը թերեւս երկրագնդի ամենաբարեբեր երկիրը չէ, բայց այն մերն է, և ես կարոտով եմ հիշում մեր անտաշ քարերը»: Հայաստանում և հայկական սփյուռքում ապրող հայկազնորդներին ներշնչեց անկորնչելի հույս, հավատ ու հայ լինելը ընդունել հպարտությամբ: «Ես չեմ կարող իմ ինքնության մասին մտածել հայությունից դուրս. իմ պարտքը Հայաստանի և հայության հանդեպ անհաշվելի է, անչափելի, վիթխարի: Ես հայ եմ իմ արյունով և ամերիկացի եմ իմ միջավայրով»: Հայ լինելը բերկրանքով սեպագրեց իբրև վերուստ շնորհված ահագին արժեք և իր գրականության խնդրանք լավագույն տարրը համարեց հայկականությունը: «Եթե հայ չլլայի, հավանաբար ասանկ գրող չլլայի: Ես հայերեն կնայիմ աշխարհին»:

Սարոյանն ամենուր ճշմարիտ կարդում էր հայ մարդու դեմքի առեղծվածը, հանելուկը, հրճվում անհավատալի այն ապացույցով, որ հայերը եղել են, կան - ապրում են և կարեն բիբլիական վեհաշուք աչալորջ լեռան հսկողությամբ ու օրհնությամբ:

Մի առիթով Սարոյանն արձանագրել է. «Ես տպավորություն ունեմ, որ ողջ հայ ժողովուրդը բանաստեղծություն ու ասք է արարում»:

Հայ գրականության հանդեպ սերը փոխանցվեց մորից, երբ մանուկ որդու հայկական արմատները պահպանելու համար հեռատես Թագուհին նրա համար կարդում էր Նարեկացի և հայոց լեզվի հանդեպ պաշտամունք ներարկում: Սարոյանը համոզված էր, որ ողջ աշխարհը քիչ թե շատ Նարեկացի պիտի իմանա: «Նարեկացին գրելիս զորավոր խոսք կգտնի, որ կերթա՛, կերթա՛, կուզի՛ յուր միտք բռնվի խոսքին մեջ»: Սեզ բախտավոր ազգ էր համարում «Նարեկ» ունենալու համար:

Ներսես Շնորհալիցն Սարոյանի համար ամենապայծառ հայ կաթողիկոսն ու բանաստեղծն էր՝ հայրենատենչ ու հայրենամորոզ նվազների համար: «Մայրս կսիրեմ կարողալ Շնորհալի՛՜ այդ եկեղեցական բանաստեղծին»: Քիչ է տակ խոսքով առաջնորդել հայրենակիցներին, պետք է նաև մեզնից յուրաքանչյուրը Շնորհալու պես հայոց կուռ պետականությունը հիմնարար արարքներով ամրապնդի և ժողովրդին դեպի բարեկեցիկ վերելքներ ուղենշի:

Նահապետ Քուչակին հուզիչ ու զեղեցիկ հայրենների համար էր մեծարում, գրության բյուրեղացման ու խորության համար: «Հին դարերու մարդ կսիրեմ ուր ընտանիք, ուր կին»: Գնահատում էր քուչակյան կերպի փոխադարձ սիրո հզորությունը, Քուչակ բանաստեղծին կսկծացնող պանդխտությունը փաստում ազգային չարիք, հայակործան ախտ, որն ուժանում, հայաթափում է իր և մահմեհների երկիրը:

Սարոյանի համար Աբովյանը հայ գրականության տիտանական բարձունքն էր: «Իմ ամենն սիրած, ինձի համար միակ Աբովյանն է»: «Վերք Հայաստանի»-ն ունկնդրում էր անկրկնելի Սուրեն Քոչարյանի անգիր ընթերցմամբ, ափեսի լցվում Աբովյանի դրամատիկ ապրումներով, հայրենական բարեմաղթանքներով, հայկազունների և Հայաստանի փառաբանմամբ: Համագում էր Աբովյանին, երազում ծովից ծով Հայաստանի վերածնման, փյունիկի

պես վերարթնացման մասին:

Գեորգ Դոդոյանի «Ծիծեռնակ» բանաստեղծությունը թարգմանում էր պարտադրված «բնավեր, տնավեր հավք դարձած» Սարոյան վտարանդու կարոտի խորքայնությունը՝ պանդխտի լաճի հոգու ամպերը ցրելու համար: Սոր պաշտելի երգը բալասան էր դառնության, տխրամածության, հիվանդ-խելագար մտայնության մղձավանջը հաղթահարելու համար: Սարոյանական խռպոտ, թախծալի ծայրով այդ երգի կատարումը սիրելիների և հայրենի արեւի կերպարների փնտրտուքի մեջ հրաշագործ սպեղանի էր:


«Թունմյանը ահագին մարդ մըն է, ահագին հոգի մը, կիհանամ անոր զարմանալի տաղանդով»: Այնքան էր ունկնդրել Սուրեն Քոչարյանի թունմյանական ծայնագրությունները, որ անգիր գիտեր աչքի պես պարզ ու բարդ խոհական քառյակները, իմաստուն հեքիաթները, վսեմ պոեմներն ու բալլադները: Արժեւորում էր Թունմյանի՝ հայրենիքի դժոխային օրերին փրկության փարոս և ազգի ջլատված ու շփոթ ուժերի համախմբման կենտրոնաձիգ ուժ լինելը: Թունմյանի վերջին՝ հանրաճանաչ կարապի երգ «Ղոջաղ կացեք»-ը Սարոյանի սեւ օրերի հմայիլ-բախմանն էր:

Եղիշե Չարենցին հայ կյանքի և մշակույթի խորհրդանիշ էր համարում: «Ես զգացի, որ Չարենցն իմ եղբայրն է: Ես սիրեցի նրան, հիացա նրանով»: Որպես հայրենակից և արվեստակից՝ Չարենցը գորակցում

մարած օջախները վառելու, երազ երկիրը շեն պահելու բաղձանքի ակնկալությամբ: Հայաստանում եղած ժամանակ պահանջեց տանել Աշտարակի Ուշան գյուղը՝ ֆիդայի անդրանիկյանների կանգնեցրած հայրուկապետի արձանին այցի: չէ՞ որ ինքն էլ մի մարտիկ էր՝ Անդրանիկի փառահեղ ընչացքով, ազգասիրության կրակի ժառանգորդմամբ և կտակման գրչով: Հենց այստեղ՝ Արագածի լանջին, առաջնորդի ծերացած զինակիցների հետ թունդ հնչեցրեց:

Սուրբ անունդ պկար է հիշվի դարեդար, Նկա յիրիք բլգ ապատրան, Անդրանիկ:

ՅՅԸՅ  
Կոմիտասը Սարոյանի սրբոց տաճարի անլռելի զանգակատունն էր՝ «ամենահայ, ամենահայր, աստվածային», նրա սրտի մորմոռի ամոքիչը: Կոմիտասով առչեցուն էր Սարոյանի անեզրական խոհականությունը: Հոգեհարազատ էր «Հովարթե» երգը՝ անդունդի անհատակությանը, լեռների երկնամերձությանը չափվող հոգաշատ մարդու ցավերին դարման փնտրելու խռովքը: «Ծիրանի ծառ». արեւածին և անուշահամ ծիրանը, ծիրանափող՝ դուրուկը, արքայական ծիրանին Սարոյանի աշխարհի սրբազնագույն մասունք-հեմակետերից էին, բայց բուն երգը ծառապաշտ հայրդու ողբն է, երբ ծիրանների խնամքը տածելուց բար չի տեսնում, սրտին խնդունի ծովի պատրանք չի գտնում, փուչ աշխարհում անվերջ-



էր նրան: «Առիվաբե հավատարիմ կման Չարենցի հիշատակին»:

Անգիր գիտեր «Ես իմ անուշ Հայաստանի» աղոթք՝ բանաստեղծությունը, բայց և գտնում էր, որ այն անկարելի է թարգմանել անգլերեն. ո՞ր հոմանիշով արտահայտես «արեւահամ» բառը. անբնական կլինի:

Հայաստան կատարած վերջին երկու այցելության ժամանակ մտերմացել էր Շիրազի, Սահյանի, Խանգաղյանի, Վահագն Դավթյանի, Լեւոն Սկրտչյանի, Հրանտ Մաթեոսյանի և այլոց հետ, ամեն մեկին ընդունում էր որպես հայապահպան մի ամրան, քանի որ մնայուն գրականությունն է ազգային յուրանշման խարիսխն ու երաշխիքը: Երանի՛ հայերը գրական հսկաներ միշտ ունենան...

ՅՅԸՅ  
Ունե՞ր արդյոք Սարոյանը հայ երաժշտության ծարավ ...

Տանը՝ Ֆրեզոյում, հաճախ լսում էր Արմենակ Շահնուրայանի երգերի ձայնակապակառվը: Սիրում էր ֆիդայական երգերը, հատկապես Անդրանիկին ծոնված կատարումը, խորխտանում կյանքի վերջին իր համաքաղաքացին դարձած ճվիրական զորավարով, գորովանքով պատմում նրա մասին հայաբառ լեզուն-առասպելներից: Անդրանիկն ու Սարոյանը նմանակներ էին նույն փափագով՝ կորցրած հայրենիքի

անպտուղ բանելուց բարձրածայն բողոքից գատ բարեբեր հեռանկարներ չի փայփայում: «Վիրավոր լորիկը՝ հայրենի ծփացող բերրի արտերի օրորում, շորորում, իր հուր-կրակ սիրով հնձվորի հոգին բնութագրող թռչանկի գովքն է: Սիրավոր-վիրավոր լորիկի գեղգեղանքը լուսնկա գիշերին սիրո արթնացման, անուշիկ պաչի-վայելքի շող է խոնջացած հնձվորի սրտում:

Կոմիտասը Սարոյանի հոգու հոգին էր, նրա երաժշտության ականջելը գողոյն մղում էր տարերքով ստեղծագործելու, արարման հրճվանքի, թռչիքի թեւեր տալիս մտածումին:

Սարոյանի բարեշնորհ Թագուհի մայրիկը կարոտափտի պահին երգել է պոլսահայ մտավորական Նահապետ Ռուսինյանի բնագրով «Կլիկկիա» երգը՝ հուսն դեմերի, Արմենիա չքնաղ երկրի՝ աշխարհի ամենագեղեցիկ վայրի մասին, որին աստամեղական հայրդին կյանքի վերջին բարե և ուզում հղել և հավիտյան մնջել երազ օրրանում: Գուցե այս երգը դարձավ դրոյապատճառ, որ Սարոյանը ևս ուզեց թաղվել Երեւանում՝ Կոմիտասի անվան պանթեոնում՝ անմահ Կոմիտասի և իրեն ժամանակակից հայ մեծերի կողքին, հայրենի զվարթ արեւի զգվանքի տաք ծոցում:

Ուրիշ էր Արամ Խաչատրյանի Շարունակությունը՝ էջ 8

ՃՉԾՈՉՂԾՁՈՍՈ

# ՄԻՔԱՅԵԼ ՕՐԱՆՅԱՆ. «ԲՈՂՈՐԱ ԿԻՄԻ ԽԱՍԿԱՆԱՆՔ. ՄԵՂՐԻՆ ԹՈՒԼԱԳՆԵԼՈՎ՝ ՎԿՐԱՆՉՎՈՒՄ Է ՄԵՐ ԵՐԿՐԻ ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ»

Մեղրու տարածաշրջանում ստեղծված բնապահպանական խնդիրների, դրանց լուծման համար արվելիք աշխատանքների մասին է զրույցը Մեղրու ավագանու բնապահպանական հանձնաժողովի այլևս նախկին նախագահ Միքայել Օհանյանի հետ:

Սկզբը՝ էջ 1

անփույթ աշխատանքի հետեւանք է, եւ կարելի է համագործակցելու կամ լավ աշխատելու դեպքում կարգի բերել՝ դրանով հարցը փակված համարելով: Ստիպված էի նաեւ ուսումնասիրել, թե հանրապետության տարածքում, այլ երկրներում առկա մնանա՞տիպ խնդիրներն ինչպէս են լուծվում կամ ընդհանրապէս լուծվո՞ւն են, թե՞ ոչ: Քիչ ավելի հեռուն գնացի եւ արդյունքում ինձ համար ավելի սարսափելի, անընդունելի, հուսահատեցնող պատկերի եւ ողբերգական իրողությունների բախվեցի: Համոզվեցի, որ այս ամբողջ համակարգված գործողությունների հետեւանք է, եւ մի ամբողջ երկրամաս հոշոտման է ենթարկվում կազմակերպված ծեւով:

Այսօր մեր տարածքը հայտնվել է որոշ ուժերի ուշադրության կիզակետում, եւ մեր ռեսուրսների յուրացումը, հատկապէս հանքահումքային ու ջրային ռեսուրսների, այդ ծրագրերն իրականացնելու ճանապարհ են հարթում, իսկ այդ նպատակներով ստեղծված միջազգային կառույցների կողմից ֆինանսավորվող մարդկային խմբերը, մեր իշխանավորների գորակցությամբ, թափվել են այստեղ՝ թալանելու, հոշոտելու մեր ունեցվածքը, վերացնելու երկրամասը եւ մեզ՝ որպէս տեսակ: Դժբախտաբար, Մեղրին հայտնվել է այդ ծրագրերի կենտրոնում, որտեղ հանքարդյունաբերությունը դիտվում է որպէս գերակա ուղղություն: Ծրագրերը, որոնք իրականացվում են Մեղրու տարածքում (համայնքների խոշորացում, Մեղրի գետի հունի փոխում, փոքր հէկերի շինարարություն եւ հանքարդյունաբերության ծավալների մեծացում) ամբողջապէս վտանգի տակ են դնում Մեղրու վաղվա օրը: Դիտարկումները, որոնք ներկայացրի, չի կարելի համարել պատահական միջոցառումների շարք՝ իբր երկրին ինչ-որ օգուտ բերելու ակնկալիքով: Վստահաբար հայտարարում եմ՝ այդ ամենը համակարգված է, եւ այսպիսի գործողությունների հետեւանքով Մեղրին՝ որպէս աշխարհագրական տարածք, 20-25 տարի անց կվերածվի դատարկ ապարների իսկալածավալ հարթակների՝ բնակվելու համար բացարձակապէս անպիտանի եւ անհնար: Այստեղ մեկընդմիջտ կոչնչանա ներկա եւ գալիք սերունդների արելու միջավայրը, եւ արդեն չեն լինի նաեւ այն մարդիկ, որոնցից պատասխան պիտի պահանջվի այս ոճրագործությունների համար:


– Ինչպիսի՞ն էին Մեղրին ու մեղրեցիներին ժամանակին եւ ի՞նչ են դարձել այսօր այդ քաղաքակրթության հետեւանքով:

– Մեղրու տարածաշրջանը բոլոր ժամանակներում, իսկ այն հազարամյակների պատմություն ունի, ունեցել է միջինը 13 հազար բնակչություն, այստեղ մարդիկ առանձնացել են իրենց աշխատասիրու-

թյամբ, մշտապէս ապրել առողջ, երջանիկ, հիմնականում եղել են երկարակյաց, կախվածություն չեն ունեցել ոչ մեկից, իրենց լիարժեք ապահովված են զգացել: Իսկ ներկայումս ուզում են Մեղրու համար իբր լավ բան անել, որի արդյունքում այս տարածքը, մինչդէռ, անընդհատ վատանում է եւ արդեն հայտնվել է ծայրահեղ վատ վիճակում: Մետաղական հանքերի շահագործումը ենթադրում է իր հետ բերել ծանր մետաղների առկայություն եւ առատություն օդային եւ ջրային ավազանում, բուսական աշխարհում, որոնք մարդու օրգանիզմից դուրս են մղում թեթեւ մետաղները՝ օրգանիզմին օգտակար, իսկ ցրված ուրանի առկայությունը տասնյակ հազարավոր տարիներ անկենդան կդարձնի այս տարածքում ամեն ինչ: Դա է պատճառը, որ նույնիսկ այսօր արդեն մեղրեցիների զգալի մասը դժգոհում է արյան բարձր խտությունից, զլխացավերից, հոդացավերից, մկանային ցավերից, հոգնածության զգացողությունից, վերին շնչուղիների, սրտանոթային, ալերգիկ հիվանդություններից, մազերի վաղ ճերմակումնից, ճաղատացումից: Տարածքում անհամեմատ ավելացել են օնկոլոգիական հիվանդությունները: Իհարկե, տնտեսվարողներին դա բացարձակապէս չի հետաքրքրում, որովհետեւ շահույթ ստանալու մոլուցքն այնքան ուժեղ է եւ այն աստիճանի է հասել, որ նրանք քթած ունեն մարդկանց կյանքի եւ առողջության վրա: Իսկ Մեղրու բրենդ համարվող միրգը, որն աշխարհին հայտնի է իր համայն հատկանիշներով, իր պահածոյացված ու չորացված վիճակով, նույնպէս վտանգված է, քանի որ թունավոր նյութերով աղտոտված գետերի ջրերով գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգումը չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ մրգի, ուրեմն եւ՝ մարդկանց առողջության վրա: Ավելին, Մեղրիում կտրուկ նվազել է բերքատվությունը, այսօր այստեղ արդեն կորիզավորներ չեն աճում, շատ ծանր չորամուտ կամ գտնվում են չորացման եզրին:

– Որո՞նք են, ի վերջո, Մեղրու գոյությանը սպառնացող առաջնային գործոնները՝ ավելի կոնկրետ:

– Արդեն սասցի, հանքարդյունաբերության ծավալների ընդլայնումը եւ նոր մետաղական հանքերի հնարավոր շահագործումը, Մեղրի գետի ջրերը խողովակաշարերով այլ տարածքներ տեղափոխելը, համայնքների խոշորացման ծրագրի իրականացումը, փոքր հէկերի կառուցումը: Մեր ջրահավաք ավազանում (Լիճք, Տաշունում), որտեղ նաեւ մեր խմելու ջուրն է գոյանում, երկրաբանական-հետախուզական աշխատանքներ են կատարվում: Տաշունում արդեն ֆաբրիկա է կառուցվել: Այս ամենին մեղրեցիները դեն են արտահայտվել տարբեր ձեւերով՝ ՀՀ նախագահին հղած ավագանու ուղերձով, բազմաթիվ



ՍՅՈՒՆՅԱՑ

Միքայել Վոլոդյայի Օհանյան. ծնվել է 1954թ. փետրվարի 2-ին Մեղրի քաղաքում: Տեղի Ստեփան Շահումյանի անվան միջն. դպրոցը 1971-ին ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ եւ վարկ» բաժնի, որն ավարտել է 1976-ին: Այնուհետեւ գործուղվել է Մեղրի եւ աշխատել շրջխորհրդի գործկոմի ֆինբաժնի ավագ վերահսկիչ-վերստուգիչ (1976-77թթ.), որից հետո ընտրվել է կոմերիտմիության Մեղրու շրջկոմի քարտուղար: 1977թ. ընտրվել է կոմերիտմիության Մեղրու շրջկոմի առաջին քարտուղար եւ աշխատել մինչեւ 1981թ.: 1981-83թթ. եղել է Մեղրու կուսընկերության բաժնի վարիչի տեղակալ, 1983-85թթ.՝ շրջխորհրդի գործկոմի մշակույթի բաժնի վարիչ, 1985-91թթ.՝ կուսընկերության բաժնի վարիչ, 1991-93թթ.՝ Մեղրու ԲՈՒՍՀ-ի տնօրեն: 1993-2013թ. Մեղրու բանկային համակարգում էր: Ամուսնացած է, ունի երեք զավակ: Անկուսակցական է: 2012թ. սեպտեմբերի 12-ին ընտրվել է Մեղրի համայնքի ավագանու անդամ, ավագանու բնապահպանական հանձնաժողովի նախագահ: 2013թ. նոյեմբերի 19-ին քաղաքացի է ավագանու անդամի պարտականություններից՝ քաղաքապետի եւ ավագանու անդամների մեծամասնության հետ սկզբունքային տարակարծություններ ունենալու պատճառով:

նամակներով: Ոչ մի արդյունք, լսել անգամ չեն ուզում, քթած ունեն նույնիսկ հանդիպումներ, քննարկումներ անցկացնելու մեր հորդորին: Շարունակվում են Մեղրի գետի հունին միջամտելու գործընթացը, փոքր հէկերի շինարարությունը, Կուրիս-Գուրեմիս համայնքների տարածքների ձորակներից դեպի Մեղրի գետ ուղղված պղչանքները դատարկ ապարներով լցնելը: Սկսվել են Կալերի, Վանքի մետաղական հանքերի որոնողական աշխատանքները եւ այլն: Ընդհանուր առմամբ 644 քառ. կմ տարածքի վրա 14 նոր հանքավայրի ուսումնասիրության եւ շահագործման արտոնագիր է տրված, եւ,

ինչպէս «Էկոլոք»-ն է գրում. «Հայաստանում, բացի «Հայ-ռուսական լեռնահանքային կազմակերպություն» ՓԲԸ-ից, ոչ մեկն իրավունք չունի զբաղվել ուրանի եւ թորիումի պաշարների որոնմամբ: ՀՀ կառավարությունն «ուրանային» մենաշնորհ տրամադրել է այդ կազմակերպությանը, ինչն ամրագրված է կառավարության 2008թ. մարտի 6-ի 234-Ն որոշմամբ»: Այս կազմակերպության հետեւում կանգնած է «Ռուսատոմ» պետական կորպորացիան: Մինչ այժմ կազմակերպությունը զբաղվում էր ուրանի որոնմամբ միայն Սյունիքի մարզի Լեռնաձոր գյուղի տարածքում: Լեռնաձորում ուրանի առկայության մասին տեղեկությունները հակասական են: ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարը հայտարարեց, որ հետազոտված տարածքում ուրան չկա, սակայն ՀՀ Աժ պատգամավորների պահանջած պաշտոնական հաշվետվությունում նշված է, որ ուրան կա:

Մեղրու շրջանն ուրանի եւ թորիումի պարունակությամբ ամենամեծ տարածքներից մեկն է, որը հաստատվել է դեռեւս ԽՍՀՄ տարիներից կատարված ուսումնասիրություններով: Դրա մասին է վկայում նաեւ Հայաստանի ուրանային քարտեզը: Այստեղ գունավոր մետաղներն ուղեկցվում են ցրված ուրանով, ինչպէս նաեւ թորիումով: Ի դեպ, մի շարք հայտնի գիտնականներ պնդում են, որ այսօր ատոմային էներգետիկայի հունք հանդիսացող ուրան 235-ի պաշարներն աշխարհում արդեն գրեթե սպառվել են: Այս մասին շատ ուշագրավ հայտարարություն է արել միջուկային ֆիզիկայի եւ ատոմային էներգետիկայի ամենահայտնի մասնագետներից մեկը՝ ակադեմիկոս Իգոր Օստրեցովը, Ֆուկուսիմայի ատոմակայանի պայթյունից հետո: 2010թ. Հայաստան եկավ Ռուսաստանի ատոմային էներգետիկայի գերատեսչության ղեկավարը՝ Մեղրեյ Կիրիենկոն՝ կարծես թե նպատակ ունենալով բացել Լեռնաձոր գյուղի հանքը, որի երկու երակ ձգվում է դեպի Լիճք եւ Տաշուն գյուղերի տարածք, բայց տեղի ունեցան ընդվզումներ, բողոքի ակցիաներ, որոնց արդյունքում ժամանակավորապէս կասեցվեց այդ գաղափարի իրագործումը:

– Տաշունում ընթացող ապօրինի աշխատանքների վերաբերյալ Ձեր հանձնաժողովի գնահատականն տեղյակ ենք, արդյո՞ք ինչ-որ բան փոխվել է ավագանու՝ մարզի դատախազին հղած դիմումից հետո:

– Ակնհայտ է՝ երբ մարդուն սոված են պահում, նա ամեն ինչի, ամեն աշխատանքի պատրաստ է: Գյուղացու հոգեբանությունը միշտ էլ տարբերվել է «ասֆալտբնակից» նա գնացել, իր համար բնակավայր է ստեղծել, ապրելու իր ձեւն ընտրել, բոլորից անկախ գործունեություն ծավալել, հետո բերել ու նրա գլխին թափել են քաղաքային ամեն ինչը՝ ներառելով տեխնիկան, սննդամթերքը, գյուղացուն պարտադրել են իրեն ոչ հատուկ ապրելաձեւ ու հետո գրկել ի սկզբանե եւ ի վերուստ տրվածից: Այսօրվա գյուղացին արդեն մեր իմացած ու տեսած ավանդական գյուղացին չէ: Նա արդեն արտադրանք





Գորիս, վերանորոգված հարված Շահունյան փողոցում

# Որ ձմեռն անակնկալներ չմապրուցի

## ՃԱՆԱԳԱՐՅԱԾԵԻՆՈՒԹՅՈՒՆ Սկզբը՝ էջ 2

համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետեւանքով: 2013-ին ծրագրող վերսկսվել է, բայց արդեն նոր մրցույթ է հայտարարվել՝ նոր պայմաններով ու պահանջներով: Ծրագրի նախագծման աշխատանքները արժեքը 680 մլն դրամ էր (որի 170 մլն դրամի շինարարական իրականացվել են այս տարում), ծրագիրը ընդգրկում է վերանոսրված U-2 մայրուղու 4.5կմ հատվածը եւ ճանապարհի ճանապարհահատվածների մայրերը:

Եվ հաճելիորեն կարելի է արձանագրել, որ Գորիսի կենտրոնական փողոցը նորմալ մայրեր ունեցավ, որոնց բացակայությունը ժամանակին զանազան ասեկոսների առիթ էր դարձել: «Մայրերը կառուցելու հետ կապված, իրոք, խնդիրներ են ծագել, բայց դրանք անհաղթահարելի չէին, – ասում է ընկերության տնօրենը, – կոմունիկացիաներ ենք տեղափոխել, հենապատ է եղել կիսաքանդ, որ վերակառուցվել ենք: Առավելագույնն արել ենք, թող ինքնագոյություն չլինի, ամեն ինչ կարգին ստացվել է: Իմ ականջին էլ են հասել խոսակցություններ, թե իբր մայրերը չենք խճապատել, ապա ասալտապատել: Ավելի շատ բան է արվել, քան նախատեսված է եղել, որովհետև մայրերի միջերկր տարբերություններ են եղել: Հատկաճանձեր կան, որտեղ եղածին մինչև 30 տոկոս ավազակապիճ ենք փռել: Նախատեսված չափից քիչ գործ չենք արել, ինչպես ներկայացվում է»:

Մեզ նաև հետաքրքրեցին Գորիս քաղաքի հրատապ խնդիրները՝ ճանապարհաշինությանն առնչվող: Մեր գրուցակիցը փոխանցեց, որ քաղաքում տակավին կան փողոցներ, որ ամենտաճգելի հիմնամորթոզման կարիք ունեն. Մամիկոնյան փողոցի մի հատվածը, դեպի Վանքի տափ տանող ճանապարհը բարեկարգվելու անհրաժեշտություն է ծագել, Սարգսյան փողոցն ընդհանրապես գրունտային ճանապարհ ունի: Իսկ մասնավորապես, դեպի քաղաքի ծայրամասեր տանող ճանապարհահատվածները տեսադաշտից դուրս են եւ բարձրորդի վիճակում:

Ինչ վերաբերում է դեպի տարածաշրջանի գյուղական համայնքներ



Գորիս, վերանորոգված հարված Խորենացի փողոցում

ձգվող ճանապարհներին, ապա վերջին երեք տարում Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Հարթաշեն, Քարահունջ, Խնձորեկ տանող ճանապարհները նորոգվել են, ընթացքի մեջ է Կոռնիձոր եւ Տեղ տանող ճանապարհների նորոգումը: Դեռեւս 2005թ. նորոգվել է Խանածախի ճանապարհը, բայց ոչ ամբողջովին, մոտ 6կմ: Գորիսի շրջանի ճանապարհներն ունեն մի առանձնահատկություն, դրանցից շատերը տուժում են սողանքներից եւ քարաթափություններից: Թասի լեռնանցքում հնարավոր եղավ չեզոքացնել սողանքային մի գոտի, բայց մյուս ճանապարհներին սողանքները միշտ զգալ են տալիս: Խնդրահարույց է մնում Սատանայի կամրջից Տաթև տանող ճանապարհը, որ խճավազային խառնուրդով հարթեցվեց, որոշ ժամանակ տանելի էր այդտեղով երթեկելը, բայց ճանապարհի ծածկը վերստին մաշվել է, դարձել խորդուբորդ, եւ էլի նույն պատմությունն է...

Տարիներ առաջ մեծ իրադարձություն էր Վերիշենով ձգվող ճանապարհի կառուցումը, որ հասնում էր Վաղատուր, Խոզմալար ու Խանածախ: Բայց սողանքների պատճառով այդ ճանապարհը ձեռքից գնում է: Արթուր Մարտիրոսյանը համամիտ է ասվածի հետ՝ հավելելով, որ ընկերությունը շահագործում է ընդամենը 18կմ մարզային նշանակության ճանապարհ, բացի այդ կառավարու-

թյան որոշմամբ՝ վատ ճանապարհները շահագործման ենթակա չեն: Դրանք որոշ ծրագրերով նախատեսված են հիմնամորթոզել, բայց թե երբ, ընկերության տնօրենը, բնականաբար, պատասխան չունի: Գորիս-Երեւան մայրուղուց դեպի Հարժիս ձգվող ճանապարհի ուսումնասիրություն է կատարվել եւ տեղեկատվություն ներկայացվել մարզպետարան: Չմեռն, ինչպես ասում են, իր իրավունքների մեջ է, ուստի, ավելորդ չէր իմանալ, թե ընկերությունն ինչպես է նախապատրաստվել ձմռան տարեշրջանին: Մինչ այդ, ընթացողին հիշեցնեց, որ «Ուսմարը» սպասարկում է 86կմ միջպետական ճանապարհ, որից 58-ը Երեւան-Գորիս-Մեղրի մայրուղու Սիսիանի սահմանից մինչև Չայգամի կամուրջն ընկած եւ 28կմ-ը Գորիսից մինչև Արցախի սահմանն ընկած ճանապարհահատվածները, ինչպես նաև 28.5կմ հանրապետական, 18կմ մարզային ճանապարհները:

Տարիներ ի վեր նշված ճանապարհների ձմեռային պահպանության համար նույն գումարն է հատկացվում, բայց, ինչպես կյանքն է ցույց տալիս, լինում են փոքրիշատ բարենպաստ, բայց նաև խստաշունչ, Սիսիան-Գորիս հատվածում՝ բուրբ ու բորանով առատ ձմեռներ (ընկերությունը, մասնավորապես, սպասարկում է Գորիս-Սիսիան ճանապարհի 13-14կմ հատվածը): Խստաշունչ ձմռանը երթեկություն-

նը երբեմն կաթվածահար է լինում Սիսիան-Գորիս ճանապարհահատվածում: Երբ բուրբ ու քամին դաշտերի ձյունը բերում-լցնում են մայրուղին, անանցանելի է դառնում երթեկությունը դեպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն եւ Հայաստանի հարավային դարպասը՝ Մեղրի:

Չմռանը դժվարություններ են ծագում Շուռնուխ-Կատարի հատվածում՝ կապված ճանապարհի թեթևությունների եւ անտառապատ տեղանքի պատճառով ճանապարհահատվածի՝ սառույցից ու ձյունից ազատվելու հետ: «Այդ եւ Թասի լեռնանցքի շրջադարձերի վրա, երբ շամ ձյուն է նստում, վարորդներն արդեն խնդիրներ են ունենում: Մենք պարզապես չենք կարող ձյունն սկսվելու պես մաքրման աշխատանքներ իրականացնել: Իսկ Գորիս-Սիսիան ճանապարհին, եթե բուրբ չի լինում, խնդիրներ չենք ունենում», – ասում է ճանապարհաշինարարը: Բացի այդ՝ Շուռնուխ-Կատարի լեռնանցք հատվածում տեղ-տեղ ճանապարհի պատասառը դեֆորմացված է: ճանապարհաշինարարները որոշ տեղեր քանդել, խիճ ու ավազ են փռել, որ հարթ մակերեսույթ ստացվի՝ մինչև խնդիրն վերջնական լուծում տալը: Չմռան անբարենպաստ եղանակներին ընկերությունը հերթապահություն է սահմանում Կատարի լեռնանցքում: Ձրուցակիցս կամխում է միտքս. ընկերությունն այժմ հնարավորություն չունի ձմռանը մի քանի տեղ հերթապահություն իրականացնող հենակետեր տեղադրել:

Նաև իմանում ենք մի տարօրինակ գործելակերպի մասին: Պարզվում է, ասենք, եթե հունվարին հինգ օր է ձյուն տեղացել, ձմեռային պահպանության համար նախատեսված գումարը կրճատում են, իսկ եթե ողջ ամիսը խստաշունչ է լինում ու նշված կողմերում բքառատ, նախատեսվածին հավելյալ գումար չի ավելանում:

Բնականաբար, ձմռան տարեշրջանում առաջին պլանին տեխնիկայով ապահովվածությունն է: Ընկերությանը վստահված ճանապարհահատվածների ձմեռային պահպանության համար անհրաժեշտ տեխնիկա ընկերության հավաքակազմում առկա է: Բայց նաև տեղեկացնում են, որ ընկերությանն առավելապես մտահոգում է այդ տեխնիկայի բարոյապես եւ ֆիզիկապես մաշված լինելը: Հին տեխնիկան նորոգելով՝ օգտագործում են, թեպետ դա էլ զգալի ծախսերի հետ է կապված: ճանապարհաշինությունում մեր ժամանակներում առաջնակարգ տեխնիկա են օգտագործում, իսկ իրենք հնով են յուր գնում: Նախեսառաջ նոր գրեյդերի կարիք ունեն, ինչպես նաև գլորների ու ասֆալտ փռող մեքենայի: «Գիզվառնիքի, ավտոպահեստամասերի խնդիր չկա, միայն գումարն է պակասում անհրաժեշտ տեխնիկա ձեռք բերելու համար, – թեման է ամփոփում տնօրենը, – նաև ռիսկային է նոր տեխնիկա ձեռք բերելն այն առումով, որ չգիտես՝ առաջիկայում անհրաժեշտ աշխատանքային ճակատ լինելու է, թե՞ ոչ»: Ինչեւէ, սառցակալած ճանապարհներն անցանելի դարձնելու համար կուտակել են 1000 խորանարդ մետր ավազ, մոտ 30 տոննա աղ:

Նոյեմբերի 28-ի գիշերը Գորիսի տարածաշրջանում առաջին առատ ձյուն է տեղացել, եւ գիշերը ճանապարհաշինարարները հերթապահություն են իրականացրել Սիսիան-Գորիս՝ ընկերության սպասարկման հատվածում:

Ամռան ամիսներին, երբ աշխատանքային լայն ճակատ կար, ընկերության աշխատակիցների թիվը հասնում էր 85-ի: Չմռան տարեշրջանում այդ թիվը նվազում է մինչև 50-ի, ովքեր բացառապես զբաղվում են ճանապարհների ձմեռային սպասարկմամբ՝ դրանք երթեկելի դարձնելու համար:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

# Դասընթացներ «Ինֆորմատիկա» առարկայից

## ՎԵՐԱԴՐԱՏՐԱՏՈՒՄ

«Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամը (գործադիր տնօրեն՝ Ամալյա Եղոյան) Հայ կրթական հիմնարկության օժանդակությամբ, Հայ օգնության ֆոնդի հովանավորությամբ արդեն 5 տարի է՝ մարզերում իրականացնում է «Ինֆորմատիկա» առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ՝ ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին, նորամուծություններին իրազեկելու, նրանց կրթական, մասնագիտական մակարդակը բարձրացնելու նպատակով:

ԳՏՏԿ-ի հիմնական նպատակներն են՝ պատրաստել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետներ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում, աջակցել վերոհիշյալ բնագավառում շուկայի զարգացմանն ու ընդլայնմանը՝ միջազգային եւ տեղական ներդրումների համար գրավիչ պայմանների ձևավորմամբ, բարձրացնել բնագավառի աշխատողների զարգացման հնարավորությունները՝ խթանելով հասարակական բոլոր ոլորտներում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանը, եւ վերջապես հնարավորություն տալ ապակենտրոնացնելու տեղեկատվական տեխնոլոգիաների շուկան Երեւանից դեպի մարզեր՝ նպաստելով երկրի տնտեսության առաջխաղացմանը: Հիմնադրամն իրականացնում է նաև երկամյա հետբուհական կրթական ծրագիր՝ վեր տեխնոլոգիաներ, մոբայլ տեխնոլոգիաներ, համակարգչային նախագծում եւ ճարտարագիտության բաժիններում:

Այս տարի ծրագրում ընդգրկված էին Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերի գյուղական եւ քաղաքային համայնքների դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչները: Նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում վերապատրաստմանը մասնակցել է ավելի քան 15 ուսուցիչ, ընդ որում՝ Սյունիքի մարզից՝ Կապանի N7, N4 քաղաքային, Գեղամուշ, Ծավ, Սյունիք, Աճառան, Կարճեւան, Նորավան գյուղական համայնքների դպրոցների ուսուցիչները: Դասապրոցների ընթացքում ուսուցիչներին ավելի շատ հնարավորություն է տրվել զարգացնել գործնական հմտությունները, հմտանալ նոր ծրագրերի կիրառման մեջ, ինչը հետագայում հնարավորություն կտա կատարելագործել «Ինֆորմատիկա» առարկայի դասավանդման մեթոդիկան:

Դեկտեմբերի 7-ին Կապանի N7 հիմնական դպրոցում Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնն «Ինֆորմատիկա» առարկայից վերապատրաստման դասընթացը: Վկայականներից բացի՝ վերապատրաստման մասնակից դպրոցները Հայ կրթական հիմնարկության կողմից կատարված 2-ական համակարգիչ եւ տպող սարք: Կենտրոնը նաև ստուգումներ է անցկացնում՝ համոզվելու, թե արդյոք տրամադրված համակարգիչները ծառայում են իրենց նպատակին, թե ոչ:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Երգ, որ ունի սկիզբ ու չունի վերջ

## Էդուարդ Զոհրաբյանի հիշատակին

**Հավարացյալ մարդ ենք. հավարում ենք Աստուծան, հավարում ենք, որ երկնային թագավորությունում մեր ձայնը հասնում է Էդիկ Զոհրաբյանի ականջին, որ նա հուշիկ քայլերով ինչպես բնորոշ էր իրեն, քայլում է մեզ հետ Գորիսի փողոցներով, մեքենան ուղղում իր Զանգեզուր աշխարհի վեհությունը ու հայրությունը, անբասնելի թթվածնով, որը ոչ մի հրապուրակնքի, ոչ մի հարսություն, ոչ մի թագավորության հետ չէր փոխի ու այդպես էլ չփոխեց երբեք:**



...1964 թ. աշնան մի ուկեծան օր ես եւ իմ ընկեր, ժուռնալիստ Կիմ Ղալաբյանը, որն, ավաղ, այլեւս մեզ հետ չէ, հայտնվեցինք Գորիսում, ու այդ օրվանից մինչեւ 2009 թվականի հունիսի 4-ի մեր վերջին հանդիպումը ես եւ Էդիկն անբաժան ընկերներ էինք: Ես չէի, որ պիտի ասեմ, թե ինչպիսի ընկերություն ենք արել: Ուրիշ էլ չի կարող ասել: Այդ ընկերությունն ասելով չէր: Հուլիսի 4-ին, Գորիսից հիվանդ-հիվանդ, ոտքերը հազիվ առաջ տանելով, տմբամբալով, մի կերպ, վեր կացավ, եկավ Երեւան Հայաստանի գրողների համագումար: Ձգացի, ավաղ, զգացի, որ հեռանում է: Որ մեկնում է անվերադարձ, անդարձ: Պայծառաստե չեմ: Համագումարի ընդմիջման ասաց. - Մի տեղ ճարի, մի պատառ հաց ուտենք: Ասացի. - Խմբագրության սենյակում ուտելու բան են պատրաստել: Չէր կարողանում խմել: Չիմաց: Հացից էլ մի երկու թիքա արեց ու մաղվող աչքերով՝ կարծես մեղավոր

րի մնան, ինձ նայեց. իմ իմացած են էդիկն այլեւս չկար: ...Դեռ մինչեւ համագումարն էր՝ Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, իմանալով, որ վատառողջ է, ասել էր՝ թեեւ ավստս կլինի, բայց չգա համագումար: Բայց եկել էր: Ամբողջ համագումարի ընթացքում կողքիս նստեցի: Ինչքան փորձեցի, որ համագումարի կեսից տանեմ դատեր տուն, չկարողացա համոզել, մնաց մինչեւ վերջ, նոր միայն թե՛ - Մի՛ն մաշին ճարի... - Գա՛մ հետո: Չթողեց: Են գնալն էր, որ գնաց: Կասկած կար սրտումս, բայց չէի ուզում հավատալ, որ վերջին անգամն են տեսնում: Նույն ամսվա վերջերին Գորիսից եկավ մահվան գույժը: Ներկա լինելով Էդիկի հուղար-

կավորությանը՝ նույն օրը պարտքս համարեցի գիրք գրել նրա մասին, որը եղավ եւ կրեց «Էդուարդ Զոհրաբյան. կանաչ աչքերով տղան» անունը: Այն տեղ հասավ նրա մահվան առաջին տարուն, տարուց բառացիորեն մի քանի օր առաջ: Ինձ երջանիկ են զգում, որ գիրքը գնահատվեց, նրան անդրադարձավ մամուլը, այդ թվում հանրապետության գլխավոր պաշտոնաթերթը «Հայաստանի Հանրապետությունը»: Ես չէի, որ այսօր գնահատական պիտի տամ Էդուարդ Զոհրաբյանի ստեղծագործությանը, բայց կարող եմ ներկայացնել նրա գրական նորամուտը: Վիկտոր Բալայանը, ով մի շրջանում պաշտոն էր զբաղեցնում պետական հրատարակչությունում, մի օր ասաց. «Մի նոր անուն են ուզում հրատարակել. Էդիկ Զոհրաբյան: Լսե՛լ են»: Ասացի, ոչ միայն լսել են, այլեւ իմ տաղանդավոր ընկերն է: «Որ եղպես է, ասա, ինչ ունի-

չունի, հավաքի, զա հրատարակչություն», - պատվիրեց Բալայանը: Եվ Գորիսից հրատարակչություն եկավ «Որոտանի որդիները» գեղարվեստական ակնարկների առաջին հատորը՝ նվիրված այն մարդկանց, ովքեր Տաթևի հիդրոէլեկտրակայան էին կառուցում Որոտան գետի վրա: Ընթերցողը ստացավ մի գիրք, որն իր գրողական բարձր կուլտուրայով մնան չէր մինչ այդ Զանգեզուր աշխարհը փառաբանած գրքերին: Առաջին ողջունողներից ու գնահատողներից էր Սերո Խանգադյանը: Հաջորդեցին մյուս գրքերը մեծերի եւ փոքրերի համար. «Բողոքները չբացվեցին», «Ամենքը մի աշխարհ ունեն», «Յուլաններ», «Հավերժություն», «Ձիեր», «Հին քրաղացի նույնը», «Խնձորեսկ» ակնարկների, պատմվածքների ու վիպակների ժողովածուները, «Օրբեյաններ», «Կորած արահետներ» վեպերը, «Գորիսի հանրագիտարան» արժեքավոր աշխատությունը եւ այլն: Նրա սցենարներով փաստագրական հինգ ֆիլմեր են նկարահանվել, ըստ որում երկուսը Կիեւի Դավթենկոյի անվան կինոստուդիայում: Թարգմանել է Ե.Շվարցի, Ա.Չխեիձեի, Ա.Ավերչենկոյի եւ այլոց պիեսները, Ա.Տիշկովի «Ռուդոլֆ Աբելն ամերիկյան դատարանի առջեւ», մոսկվաբնակ, ռուսագիր Գ.Կարապետյանի «Հայ բանահյուսության գոհարներ» գրքերը, Անդալուզիայի միջնադարյան բանաստեղծների ստեղծագործություններ: Պարզեւտարվել է Ռուսաստանի Դաշնության «Փառքի Ոսկե աստղ» շքանշանով, ՀԳՄ «Գրական վաստակի համար» մեդալով, հանրապետական եւ ԽՍՀՄ տարբեր պատվոգրերով: Արձակագիր, լրագրող, թարգմանիչ, հրատարակախոս, Գորիսի պատվավոր քաղաքացի Էդուարդ Զոհրաբյանը բազմաբանաբար մարդ էր: Մի անգամ Մոսկվայում իրերի բերումով լսելով Առնո Բաբաջանյանի «Մի՛ շտապիր» երգի նրա կատարումը՝ խորհրդային մեծանուն երգչուհի Մարիա Բիեշուն շատ

ափսոսանք է հայտնել, որ նա թողել է երգելն ու անցել ժուռնալիստիկային: Նույն ափսոսանքն է հայտնել նաեւ համերկրացի Կոնստանտին Օրբեյանը, ով նրան քանիցս հրավիրել է երգելու Հայաստանի պետական էստրադային նվագախմբում: Բայց հաղթել են ժուռնալիստիկան եւ գրականությունը: Եթե այս ամենը չլիներ, է.Զոհրաբյանը նաեւ փայլուն գեղանկարիչ կդառնար, նրա վրձնահարվածներով հայրենի բնաշխարհի չքնաղ պատկերներ կան կախված Գորիսի՝ նրա բնակարանի պատերին: Սակայն բոլորը, թեկուզ լավ, հորքի էին, նվիրումը գրիչն էր: Այն էլ այնպիսի նվիրում, որ Գորիս աշխարհի Բարձրական գյուղում ծնված ու ամբողջ կյանքը Գորիսում անցկացրած լրագրողին «Դուրժբա նարողով» անսագիրը վստահի ու չորս ամսով ստեղծագործական գործունեան ուղարկի... Տայգա: Այս էր Էդիկ Զոհրաբյանը: ՀԳՄ Սյունիքի բաժանմունքի նախագահ (այդ պաշտոնում էլ կնքել է իր մահկանացուն) Էդուարդ Զոհրաբյանն ավարտել է Մոսկվայի հասարակական գիտությունների ակադեմիայի ժուռնալիստիկայի բաժինը, Բարձրակարգ լրագրողների պատրաստման համամիութենական ինստիտուտը: Աշխատել է շրջանային եւ հանրապետական մամուլում, ռադիոհեռուստատեսությունում, Արմենպրես, Ագրոպրես գործակալություններում, «Նորաթերթի» խմբագրությունում: Ապրեց մի սովորական պարզ, ռանչպարի կյանքով, բայց եւ երկրի ու հողի տերն էր նա, ու ապրեց նաեւ երկրի ու հողի տիրոջ իրավունքով: Ու իր այդպես գեղեցիկ ապրելով էլ անվերջանալի պահելու է իր Զանգեզուր աշխարհը՝ աշխարհին ու մարդկանց պարզած տարեգրությամբ: Որովհետեւ ինքը Զանգեզուր աշխարհի տարեգիրն էր: Որի համար էլ նրան շատ են հիշելու, երկար են հիշելու: **ՎԱՆԻԿ ՍԱՆԹՅԱՆ «Գրական թերթ», N17, 24 մայիսի 2013թ.**

# Դեկտեմբերի 1-ը ՄԻԱՎ ՁԻԱՅ-ի դեմ պայքարի միջազգային օրն էր

## ԱՆՈՂԶԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

**Առողջապահության համաշխարհային կազմակերպության եւ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ ամեն տարի դեկտեմբերի 1-ը նշվում է որպես սպիդի դեմ պայքարի համաշխարհային օր: Սա այն եզակի օրերից մեկն է, երբ բոլոր մարդիկ՝ անկախ կրոնական եւ ազգային պարկանելությունից, սեռից, սոցիալական վիճակից, միանում են ընդհանուր գաղափարի շուրջ՝ մարդկությանը հանդիպած չարիքի դեմ:**

Առաջին անգամ այդ օրը նշվել է 1988թ. դեկտեմբերի 1-ին, երբ աշխարհի երկրների առողջապահության նախարարների հանդիպման ժամանակ սոցիալական հանդուրժողականության եւ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի մասին ավելի շատ տեղեկատվության փոխանակման ընդլայնման կոչ արվեց: Վարակը մեծ մասշտաբներ էր հասել եւ տարածվել ամբողջ աշխարհում: Դեռես չեն հայտնաբերվել վարակը լիովին բուժելու դեղամիջոցներ, սակայն կան այնպիսի դեղեր, որոնք մեղմում են հիվան-

դության զարգացումն ու ընդլայնումը: ՄԻԱՎ-ն ընդունակ է բազմանալու միայն մարդու օրգանիզմի բջիջների ներսում, օրգանիզմից դուրս ոչնչանում է: Հիվանդությունն առանց ակտանիշի կարող է ընթանալ 7-15 տարի, քանի դեռ ՄԻԱՎ վարակը չի անցել ՁԻԱՅ փուլի: Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին ՀՀ օրենքի համաձայն՝ պարտադիր բժշկական խորհրդատվության եւ հետազոտության ենթակա են միայն արյան, կենսաբանական հեղուկների, հյուսվածքների, օրգանների դոնորները եւ ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված երեխաները: 1989թ. Հայաստանում գրանցվել է ՁԻԱՅ-ից մահվան առաջին դեպքը: 2001թ. գրանցվել է ՁԻԱՅ-ից երեխայի մահվան առաջին դեպքը: Վիճակագրությունը փաստում է, որ ՄԻԱՎ վարակով հիվանդների ընդհանուր թվում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 70.7 տոկոս: Վարակի 22 դեպք արձանագրվել է երեխաների մոտ: ՄԻԱՎ-ով վարակվածների շուրջ 60 տոկոսը 25-39 տարիքային խմբում է: Հայաստանում վարակի փոխանց-

ման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը(48.9 տոկոս) եւ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը(43.9 տոկոս): Մեր երիտասարդների շրջանում այսօր ինֆորմացիայի մեծ պակաս էր «դարի հիվանդության» մասին: ՄԻԱՎ վարակն այն հիվանդություններից է, որոնց ձեռքբերումը պայմանավորված է հիմնականում մարդկանց վարքագծով եւ կենսակերպով: Վարակվելուց խուսափելու համար պարզապես անհրաժեշտ է դրսևերդել անվտանգ վարքագիծ, զերծ մնալ թմրամիջոցներ ընդունելուց, օգտագործել մեկանգամյա օգտագործման կամ փխտագործված ներարկիչներ, ասեղներ, խուսափել պատահական սեռական կապից: Օրգանիզմում ՄԻԱՎ-ի առկայությունը կարելի է հաստատել միայն հատուկ հետազոտության օգնությամբ: ՄԻԱՎ-ը չի փոխանցվում առօրյա, կենցաղային շփումների ժամանակ: ՄԻԱՎ-ը 1996թ. ձեռնարկեց ՄԻԱՎ/ՁԻԱՅ (ՄԱՁԻԱՅ) հարցերի համատեղ ծրագիր, որը 2004 թվականից գործում է նաեւ Հայաստանում: Ծրագիրն աջակցում է մեր հանրապետությունում ապահովելու ՄԻԱՎ-ի կանխարգելման, բուժման, խնամքի եւ աջակցության համընդհանուր հասանելիությունը: Ծրագիրը տրամադրում է փորձագիտական եւ տեղեկատվական օժանդակություն: Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության վերջին տեղեկատվության՝ 2013թ. նոյեմբերի 29-ի դրությամբ ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 1586 դեպք:



ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 3500: Կապանի բժշկական կենտրոնի իմունոլոգիական լաբորատորիայի բժշկուհի Գայանե Մովսիսյանը հետևյալն ասաց ՄԻԱՎ/ՁԻԱՅ վարակի վերաբերյալ. «Ե՛վ կապանցիները, ե՛ւ Կապանում գտնվող հյուրերը վարակի հարցով միշտ դիմում են մեզ: Հիմնականում ՄԻԱՎ վարակի ստուգումներ անց են կացվում հոգիության ժամանակ, երբ հոգիները բժշկական խորհրդատվության են գալիս: Համապատասխան ստուգումներ անելուց անմիջապես հետո արդյունքներն ուղարկում ենք երեսան՝ ՁԻԱՅ-ի կանխարգելման

հանրապետական կենտրոն, որտեղ վարակի առկայությունը հաստատվելու դեպքում հիվանդը ստանում է համապատասխան բուժում: Եթե մեկ կամ երկու տարի առաջ վարակը մարդուն հուսահատության էր հասցնում, ապա այժմ քիչ թե շատ հնարավոր է դեղերով կասեցնել հիվանդության զարգացումը»: ՁԻԱՅ-ը մարտահրավեր է ոչ միայն ժամանակակից առողջապահությանը եւ գիտությանը, այլեւ համայն մարդկությանը: Վարակված մարդկանց մոտ 90 տոկոսը չգիտի իր վարակված լինելու մասին, եւ հենց սա էլ նպաստում է վարակի տարածմանը: Ուստի եղջք զգոն, տեղեկացված եւ միշտ հետեւեք բժշկի խորհուրդներին: **ՄԱՆԵ ՂԱՎԹՅԱՆ**

**ՇՆՈՐՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ** Վերջին տարիներին բարի անուն ու ճանաչում է ձեռք բերել «Գորիսի պետական թուղթ» ՊՈԱԿ-ը: Ահա ինչու իմ երկու աղջկան՝ Սրբուհի եւ Օվսաննա Ավուրյաններին խորհուրդ տվեցի ուսումը շարունակել այնտեղ: Նրանք նախընտրեցին սովորել դեղագործություն մասնագիտությամբ: Ծանոթանալով նրանց ուսումնառության ընթացքին, կարգ ու կանոնին, կարող եմ ասել՝ հիացած եմ: Տնօրեն Կարեն Լազարյանի պատասխանատու ու հետևողական աշխատանքի շնորհիվ այնտեղ հիանալի ուսումնական գործընթաց է կայանում: Գործնականի ու տեսականի համակցումն օգնում է հիմնովին տիրապետելու մասնագիտությանը: Քոլեջը համագործակցում է տարբեր կազմակերպությունների հետ ու նաեւ նրանց շնորհիվ համալրում նյութատեխնիկական բազան: Ես հիացած եմ քոլեջի կոլեկտիվով, հատկապես տնօրենի գործելակերպով: Կողմնակի մարդիկ մուտք չունեն քոլեջ, հսկվում են ուսանողների հաճախումներն ու դասապրոցեսը, տգեղ երեւոյթներ չեն նկատվում: Անգամ էքսկուրսիաների ժամանակ տնօրենը միշտ նրանց կողքին է, պատասխանատու՝ յուրաքանչյուրի համար: Խորը գիտելիքներ ուսուցանել, լավ մասնագետներ պատրաստել եւ լավ մարդ ու քաղաքացի դաստիարակել. ահա քոլեջի տնօրենի ու մանկավարժական կոլեկտիվի հավատանքը: Սա միայն իմ կարծիքը չէ, այլ շատ-շատ ծնողների: Ծնորհակալություն ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը, նախարար պարոն Արմեն Աշոտյանին՝ Գորիսում մեծ կրթօջախ ունենալու համար:

**ՍԱՐՄԵՆ ԱՎՈՒՆՅ, ք. Գորիս**

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ** Այունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում Արարատ Անուշավանի Ավետիսյանի կողմից քաղաքացիական գործ է հարուցվել Արմեն Անուշավանի Ավետիսյանին մահացած ճանաչելու պահանջի մասին: Բոլոր այն անձանց ու կազմակերպություններին, որոնք տեղեկություններ ունեն քաղաքացի Արմեն Անուշավանի Ավետիսյանի գտնվելու վայրի մասին, խնդրվում է հայտնել Այունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ք. Կապան, Մ. - Ստեփանյան փողոց 3/2, հեռախոս՝ (0285) 5 22 66:

## Այունյաց երկիր

Տ Ա Ս Ն Օ Ր Տ Ն Թ Ե Ր Թ

Գլխավոր խմբագիր՝  
ԷՁ ԾՂ Գ Է Չ ԷՕ ԾԷՁ ՍՍԶ Ս

**Հասցե՝** Կապան, Շահումյան 20/32:  
**Հեռախոս՝** (0285) 5 25 63,  
(091) 45 90 47,  
(077) 06 28 02:  
**Էլ. փոստ՝** syuniacyerkir@mail.ru  
**Ինքնբերական՝** www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

**«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ»** բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

ՌՆՁԱՆԻ ՕՏԱԿ ԿԱՊԻՏԱԿԱՆ ԵՆ ԳՈՎԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒՅԵՐ:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 11.12.2013թ.:



# «Վերադարձի» ուշագրավ նախաձեռնությունը

## ՀԱՇՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

**1992թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան դեկտեմբերի 3-ը հռչակեց հաշմանդամների միջազգային օր՝ Նպատակ ունենալով հանրության ուշադրությունը սեւեռել հաշմանդամների խնդիրների վրա, պաշտպանել նրանց արժանապարտությունը, ապահովել նրանց լիակատար ինտեգրումը հասարակության հետ:**

«Վերադարձ» երիտասարդական քաղաքացիական շարժում» հասարակական կազմակերպության անդամները դեկտեմբերի 2-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ, այցելեցին Կապանի N3 հատուկ դպրոց՝ անակնկալ մատուցելով կարիքավոր երեխաներին: Կազմակերպության հիմնադիրներից Դավիթ Սիմոնյանը նախ նշեց, որ

այսօրվա դրությամբ Հայաստանում պաշտոնապես գրանցված է 177 հազար հաշմանդամ, ովքեր ամեն օր բախվում են տարբեր խնդիրների. «Ձեր հանդեպ պետք է հաճախակի ուշադրություն ցուցաբերվի, այլ ոչ թե միայն դեկտեմբերի 3-ին: Երբ նախորդ անգամ այցելեցինք, մեզ վրա մեծ տպավորություն թողեցին ձեր ջերմությունն ու հոգատարությունը միմյանց նկատմամբ»:

«Այունյաց երկրի» հետ զրույցում նա նաեւ տեղեկացրեց, որ մինչ այդ կազմակերպության ներկայացուցիչներ զննցել էին դպրոց՝ ծանոթանալու տեղի պայմաններին, դասապրոցեսին, երեխաների առօրյային: «Առաջին այցի հիմնական նպատակը շփոթում էր: Ցանկանում էինք ծանոթանալ երեխաների հետ, իմանալ՝ ինչ խնդիր են ինչի կարիք ունեն նրանք: Կարծես թե բոլոր պայմանները կային: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների հետ եկանք

եղրակացության, որ շարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար հարկավոր է համապատասխան գույք ձեռք բերել, որպեսզի նրանք իրենց ժամանակն ավելի հետաքրքիր եւ արդյունավետ անցկացնեն: Եթե մեծերը կարողանում են ֆուտբոլ, բասկետբոլ կամ վոլեյբոլ խաղալ եւ բավարարել իրենց հետաքրքրությունը, ապա փոքրերը զբաղվածությամբ խնդրի առջեւ են կանգնած եւ ավելի շատ ուշադրության կարիք ունեն: Այդ իսկ պատճառով նրանց համար պատրաստել ենք նվերներ եւ անակնկալներ՝ սպորտային խաղերի համար նախատեսված իրեր, տրամաբանական խաղեր, որոնք կնպաստեն մտավոր զարգացմանը, ինչպես նաեւ պարագաներ՝ նկարչությամբ զբաղվող երեխաների համար, ովքեր, ի դեպ, շատ շնորհալի են», – ասաց Դավիթ Սիմոնյանը:

Իսկ կազմակերպության անդամ Գոռ Թադևոսյանը հավելեց. «Նրանք մեր հասարակության լիարժեք անդամներն են, մեր ուշադրության կենտրոնում են եւ, բնականաբար, ծրագրող շարունակական կլինին»: Կրթօջախի սաները, ընդունելով նվերները, շնորհակալություն հայտնեցին կազմակերպության ներկայացուցիչներին, լուսանկարվեցին եւ շտապեցին ճաշարան՝ համտեսելու իրենց համար բերված տորթը:

**ՆՈՒՐԱՐ ԴԱՎԹՅԱՆ**

# Գորիսի մարզական ավանդույթների վերականգնումը՝ օրախնդիր

## ՄԱՐԶԱԿԱՆ

**Ռաֆիկ (Սաքո) Շալունցը մարզիկ է եղել բռնցքամարտիկ, ԽՍՀՄ սպորտի վարպետ, մասնակցել է հանրապետությունում անցկացվող մրցումների, դարձել հաղթող եւ մրցանակակիր: Նախկին մարզիկի ցանկությունն է, որ իր հայրենի քաղաքում մարզական կյանքի զարկերակը համաչափ բաբայիս: Նրան հանգստի քաղաքը այն հանգամանքը, որ Գորիսը գործող լողավազան չունի: Դեռահասների մարմնակրթության գործում կարեւորում էր լողը, քանի որ դրանով զբաղվողի օրգանիզմը ներդաշնակ է զարգանում (մկաններ կան, որ միայն լողալիս են գործում): Բացի այդ լողը նաեւ մարդու անվտանգությունն է ապահովում (դեռահասների եւ (ոչ միայն) քանի-քանի խելոպելու դեպքեր են եղել գետերում ու ջրավազաններում):**

– Գորիսում լողավազան ունե-

նալու խնդրանքով ամիսներ առաջ դիմեցի Սուրեն Խաչատրյանին, նա էլ թե՛ ցույց տուր տեղը, պատասխանեցի, որ քաղաքի նախկին լողավազանը կարելի է նորոգել եւ գործարկել: Չերկարացնեմ, գործը գլուխ եկավ, եւ ցանկանում եմ այսօր շնորհակալությունս հայտնել այդ գործի նախաձեռնողին՝ Սուրեն Խաչատրյանին: Քիչ բան չէ, այս տարի մոտ 500 երեխա սովորել է լողալ, – պատմում է Շալունցը:

Որպես Գորիսում ծանաչված անձնավորություն խնդրում ենք ներկայացնել քաղաքի մարզական կյանքը: Զրուցակիցս մտահոգություն է հայտնում, որ Գորիսում նախկինում տարածված էին մի շարք մարզաձեւեր՝ վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ, շախմատ, սուսերամարտ: Գորիսեցի մարզիկները մրցում էին հանրապետական տարբեր մրցաշարերում: Նույնիսկ գյուղական համայնքներում զարգացած էին առանձին մարզաձեւեր, օրինակ Խամաժախում՝ վոլեյբոլը: Դրանց մասին միայն հուշեր են մնացել: Սպորտի մեջ ներգրավված էին դարձրեցին հասակները, մասնակ-



ցում էին «Կաշվե գնդակ» ֆուտբոլային մրցաշարին, «Փայլակ» միջդպրոցական տարբեր մարզական խաղերի: Այժմ մանկապատանական սպորտն էլ է անտեսված: Շալունցը նաեւ հիշում է, որ Արցախյան պատերազմի ամենածանր օրերին գործարկվեց Գորիսի ֆուտբոլի խաղադաշտը, եղավ ժամանակ, երբ քաղաքի «Ձանգեզուր» թիմը մասնակցում էր ֆուտբոլի հանրապետ-

# ՏՕԵ ԹՁՄՕԾՕՍ ԻՍՉՍԷՐ ՉԲԷՉ ԾԾՔՍՍ՝

Վիլյամ Սարոյանը, Հայաստանը, հայ գրականությունն ու երաժշտությունը

## ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԸ

Սկիզբը՝ էջ 3

հանդեպ տածած սարոյանական համակարգը. Խաչատրյանի կյանքի առասպել-ողիսականը ներդաշնակ էր Սարոյանի կյանքի զարկերակին. նա էլ իր նման աստվածատուր հոգու էլեւէնները սրբորեն ընծայաբերեց հայությանն ու մարդկությանը: Խաչատրյանը կարծես բարձրակիր թե՛ մտավորական մարդու կատարյալ հանճարեղության ճիշտ իր տաբերակն էր իր ճաշակով. «Արամ Խաչատրյանը երաժշտությունը գրել է գարնանալի հնչյունախմբին մեջ, անոր երաժշտություն երբեք չի խաբում»: Աստվածացնում էր հայ դասական երաժշտության Արարատ Արամ Խաչատրյանի «Գայանե» եւ «Սպարտակ» բալետները, կոնցերտները, բոլոր-բոլոր բեռուն գործերը՝ միշտ զմայլվելով կոմպոզիտորի ուրույնությամբ եւ հայկական սիրազեղ մեղեդայնությամբ:

Նա իրազեկ էր հայ երաժշտական արվեստի նոր նվաճումներից, հետաքրքրվում էր Առնո Բաբաջանյանի, Տիգրան Մամուրյանի, Գո հար Գասպարյանի, Լուսինե Զաքարյանի եւ այլոց բացահայտումներով:

Վիլյամ Սարոյանը հանճարեղ հայ գրող է՝ դարերի հեռուներից եկած ու դեպի դարերի վառ ապագան զննող արմենականի ընդհանրացված հավաքական կերպար, ով հոգեւոր հայր, առաջնորդ է նեցուկ է մեզ բոլոր ժամանակներում: Մահը նրա պարագայում բացառություն է արել՝ հավերժ երիտասարդական գրավթություն եւ անմահություն պարզեցնելով նրա ամօձին եւ քանքարավոր գրական ժառանգությանը:

## ՍԵՂԱ ՍԱՐՈՅԱՆ

Այունիքի տարածաշրջանային պետական քոլեջի մեթոդիստ ուսուցչուհի

տության առաջնությանը: Իսկ հիմա՞:

– Գորիսում սպորտը հետընթաց է ապրել, զոնե մարզական խաղերով Գորիսն աչքի է ընկել, բայց հի մա ոնց որ ամեն ինչ պրծել է, եթե չասենք սպորտը մեռած է մեր քաղաքում: Ամեն տարի ուսումնական առարկաներից օլիմպիադաներ են անցկացվում, ֆիզկուլտուրայից չի անցկացվում, չգիտեմ՝ ի՞նչն է պատճառը, – նկատում է նախկին մարզիկը եւ հավելում, որ դպրոցականները նույնիսկ տարրական պատկերազնուն չունեն մարզաշխարհում տեղի ունեցող խոշոր իրադարձությունների մասին, ամառային եւ ձմեռային օլիմպիական խաղեր եւ այլն:

Իսկ ո՞րն է ելքը նման նեղ վիճակից, անընդհատ խոսում են բնակչության առողջ ապրելակերպի մասին, պատանիների եւ աղջիկների ֆիզիկական դաստիարակության մասին, բայց սայլը տեղից չի շարժվում, – ուստի ցանկանում ենք իմանալ նրա կարծիքը:

– Մարզադպրոցները պիտի արդյունավետ գործեն, մարզիչները պիտի ակտիվություն դրսեւորեն, քաղաքապետարանն ու մարզպետարանը պետք է ուշադրության կենտրոնում պահեն սպորտը, որ վերականգնվեն Գորիսի մարզական ավանդույթները, – թեման եզրափակում է Ռաֆիկ Շալունցը:

**ՎԱՐՄ ՕՐԲԵՆԱՆ**